

որուն մէջ է քրիստոսի մարինն ու արիւնն, եւ այն մատովը կը շօշափէ մանկան շրթունքն. եւ այս պատճառաւ այս Հաղորդութիւնը «շրթնահաղորդութիւն» կ'անուանի¹⁰:

Ամուսնութեան խորհուրդն որթողոքս եւ կեղեցիէն կը զանազանի միայն քանի մ'աղօթիւք¹¹, նոյնպէս ուրիշ արարողութիւն մ'ալ կը կատարուի, այսպէս՝ ամուսնացեալոց վիզը մետաքսեայ չուան մը կ'անցուի, որոնց ծայրը կրծոց վրայ խաչաձեւ կը փակցուի մոմով, որ եւ նշան է երեքօրեայ ժուժկալութեան: Երեք օր ետքը, նաեւ երբեմն ամուսնութեան յաջորդօրը քահանայն աղօթքով կը քակէ այս կապերն: Յառաջագոյն — ինչպէս նաեւ այժմ յԱսիա — փեսին ձեռքը սուր մը կը տրուէր՝ իրրեւ նշան կնոջ վրայ ունեցած բացարձակ իշխանութեան:

Այրին իւր հանգուցեալ ամուսնոյն համար տարի մը սուգ կը բռնէ:

Հաղորդութիւն աշխարհականաց կը տրուի երկու տեսակով, բայց անխմոր հացիւ եւ անջուր (անապակ) սպիտակ կամ կարմիր գինւով¹², բայց նախ պէտք է որ մեղքերը խոստովանուի, որմէ ազատ են միայն — եօթը տարւընէ վար տղայք:

Ապաշխարանքը կը կատարուի պահօք եւ մեղաց խոստովանութեամբ:

Վերջին օծումն, ինչպէս ըսինք, աշխարհականաց երբեք չի տրուիր, այլ միայն քահանայից. երբ ծանր հիւանդ են, եւ մահուան անկողնոյ վրայ. իսկ աշխարհականաց վրայ քա-